վոխադրելուն, այժմ յետ առին իրենց առաջարկը և տատանում էին անվճռականութեան մէջ։

Այս բոլոր կարծիքները լսելուց յետոյ, Քաջազնունին յայտարարեց, որ եթէ Ազգ. Խորհուրդը մնայ Թիֆլիսում կամ կազմուեն երկու Ազգային խորհուրդներ, ինքը կը հրաժարուի վարչապետութիւնից։ Որի վրա, 7 քուէով ընդդէմ 5-ի, որոշուեց Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը տեղափոխել Երևան։ Հայը շատ ամուր էր նստել Թիֆլիսում ու դժուարութեամբ էր պոկ գալիս։

Երկար ձգձգումներից ու վարանումներից յետոյ, յուլիս 17-ին, Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը, վերջապէս, մեկնեցին Երևան։ Ալեքսանդրապոլով գնալը վտանգաւոր էր. Սանահնից սկսած երկաթուղին գտնուում էր թիւրքերի ձեռքը։ Պէտք էր անցնել Աղստաֆա—Դիլիջանով։

Մեկնողների մէջ էին՝ կառավարութեան անդամները՝ Քաջազնունին, Ա. Կարճիկեանը, զօր. Հախվերդեանը, Ազգ. Խորհրդի կողմից՝ Աւ. Սահակեանը, Ս. Տիգրանեանը, Ստ. Մալխասեանը, Պ. Զաքարեանը, Ռ. Տէր-Մինասեանը, Ա. Խոնդկարեանը, բժ. Ա. Բաբալեանը, Հ. Ազատեանը, Ա. Մխիթարեանը և ուրիշներ, այլ և զօրապահակ՝ Դալի Ղազարի գլխաւորութեամբ։ Նրանց հետ գնում էին և երկու գերմանացի սպաներ՝ լէյտենանտ Ֆոն Մոմսենը և օբեր-լէյտենանտ Այզենմանը՝ զօր. Ֆոն-Քրեսի ներկայացուցիչները, և մի թիւրք սպայ Վեհիբ փաշայի կողմից։

Մեկնումը կատարուեց շատ տխուր պայմաններում։ Վրացիները, որոնք, առհասարակ, երևելի վարպետներ են հանդիսաւոր ընդունելութիւններ ու «բարի երթ»-եր կազմակերպելու, այս անգամ, կարծես դիտմամբ, արել էին ամէն բան, որպէսզի վիրաւորեն հայերի ինքնասիրութիւնը։ Հակառակ նախօրօք հայերի կողմից արուած դիմումի, վրաց կառավարութիւնը ո՛չ մի քայլ չէր արել դիւրացնելու համար «քոյր հանրապետութեան» կառավարութեան ճանապարհորդութիւնը։ Վրաց կառավարութեան կողմից ոչ մի ներկայացուցիչ չէր եկել կայարան։ Երկաթուղային վարչութիւնը, իր հերթին, անփափկանկատ բծախնդրութիւններով, դժուարութիւններ էր հանում. տրամադրել էր մի հին, կեղտոտ ու անյարմար վագոն, կարծես գաղթականներ էին ճամբորդողները։ Մեծ դժուարութեամբ կարելի էր եղել արտօնութիւն ստանալ՝ մի-երկու կիսախարխուլ ինքնաշարժ տանելու։ Նեստացած, դառն զգացումներով հեռացան Թիֆլիսից Հայաստանի վարիչները։ Կարծես, թշնամի երկրից էին հեռանում։ Փոյլի կայարանում վրաց սահմանապահները լրացրին պակասը՝ փորձելով նոյնիսկ խուզարկել Հայաստանի կառավարութեան վագոնը, և միայն գերման սպայի միջամտութիւնը ազատեց այդ խայտառակութիւնից։

Ընդհակառակը, ինչքա՜ն տարբեր էր վերաբերումը Ադրբէջանում։ Սահմանի վրա հայկական կառավարութիւնը ընդունուեց գինուորական պատիւներով. ընդառաջ էին եկել նահանգապետը և Ադրբէջանի կառավարութեան ներկայացուցիչները։ Աղստաֆայում և Ղազախում արուեց պաշտօնական ընդունելութիւն. ճաշ էր պատրաստուած ի պատիւ հիւրերի։ Թուրք